

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԿԱՑՄԱՆ ՀԱՆՐԱՆՈՒՄԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԿԱՐԳՈՒՄԸ

ՄԻՇԱ ՎԱՍԻԼՅԱՆ

Արտատպագրական միավորումներում և ձեռնարկություններում գիտատեխնիկական առաջադիմություններ իրականացվում է հիմնականում երկու ուղղությամբ: Դրանցից առաջինը արտադրանքի նոր տեսակների մշակումը, կոնստրուկտավորումը և ներդրումն է, ինչպես նաև՝ թողարկվող արտադրանքի տեխնիկական մակարդակի աճը, ինչպես նաև՝ բարձրացումը: Երկրորդ կարևոր ուղղությունը գիտության ու տեխնիկայի վերջին նվաճումների հիման վրա միավորումների և ձեռնարկությունների արտադրական բաղադրատեխնիկական մակարդակի բարձրացումն ու կատարելագործումն է: Տեխնիկայի, տեխնոլոգիայի և արտադրության կազմակերպման կատարելագործման ուղղությամբ իրականացվող միջոցառումները, որպես կանոն, կապված են միանվագ կապիտալ ներդրումների և ընթացիկ ծախսերի հետ: Այդ կապակցությամբ ՍՄԿԿ XXV համագումարում խնդիր դրվեց կապիտալ ներդրումները տրամադրել նախ և առաջ գործող ձեռնարկությունների, միավորումների տեխնիկական վերազինմանը և վերակառուցմանը՝ նպատակ ունենալով այդ միջոցառումների հաշվին ապահովել արտադրական կարողությունների աճը: «Մենք նպատակահամար ենք գտնում դիմել այդ բանին, — նշվեց Լ. Ի. Բրեժնևի ղեկավարման մեջ, — քանի որ կարևոր ենք համարում շեշտը դնել գործող սարքավորումների, արդեն ստեղծված կարողությունների ավելի լրիվ օգտագործման վրա: Հենց սա է ժողովրդական տնտեսության ինտենսիվացման գիծը»:

Ժամանակակից պայմաններում ավելի ու ավելի հրատապ է դառնում տեխնիկական առաջադիմության արագացումն աշխատանքի միջոցների անընդհատ նորացման, արդիականացման, առաջավոր տեխնիկայի ներդրման և արտադրության կազմակերպման կատարելագործման միջոցով: Պետական կենտրոնացված կապիտալ ներդրումների հետ միասին այդ խնդրի լուծման գործում կարևոր դեր են խաղում ապակենտրոնացված կապիտալ ներդրումները և առաջին հերթին՝ արտադրության զարգացման ֆոնդը, որը նախատեսված է տեխնիկական առաջադիմության ուղղությամբ իրականացվող միջոցառումների ֆինանսավորման համար: Կապիտալ ներդրումների այդպիսի բաժանումը հիմնվում է պետական կենտրոնացված պլանային ղեկավարման և ձեռնարկությունների, միավորումների ինքնուրույնության ու նախաձեռնության գույակցման վրա:

Ինչպես հայտնի է, մինչև տնտեսական ռեֆորմը կապիտալ ներդրումները հասկացվում էին բացառապես կենտրոնացված պլանով և մեծ մասամբ տրամադրվում էին նոր ձեռնարկությունների կառուցման համար: Գործող

1 «ՍՄԿԿ XXV համագումարի նյութեր», Երևան, 1976, էջ 67:

ձեռնարկությունների վերականգնումն ու լրնդլայնումը կատարվում էր պետական բյուջեի հաշվին՝ անվերադարձ ֆինանսավորման կարգով: Այդ պատճառով ձեռնարկությունները համախառն հաշվարկված չէին կապիտալ ներդրումների արդյունավետության բարձրացման և հիմնական ֆոնդերի ռացիոնալ օգտագործման գործում: Պլանավորման և տնտեսական խթանման նոր պայմաններում լրիվ տնտեսաշարժի արմատավորումը մասնավորապես դրսևորվում է նրանում, որ նյութական շահագրգռվածության և պատասխանատվության սկզբունքը տարածվում է նաև ձեռնարկությունների և միավորումների արտադրական ֆոնդերի վրա: Այդ կապակցությամբ արտադրական կոլեկտիվների տնտեսական խթանման համակարգում կարևոր դեր է խաղում արտադրության զարգացման ֆոնդը, որի ստեղծումը պայմանավորված է արտադրության տեխնիկական վերադիման և վերականգնման գործում արտադրական կոլեկտիվների ինքնուրույնության և նախաձեռնության բարձրացման անհրաժեշտությամբ:

Ոոցիալիստական տնտեսավարման փորձը ցույց է տալիս, որ արտադրության զարգացման ֆոնդի ստեղծումը զգալիորեն ընդլայնեց ձեռնարկությունների իրավունքները սեփական միջոցների օգտագործման ասպարեզում և նպաստավոր պայմաններ ստեղծեց արտադրության արդյունավետության բարձրացման համար: Ձեռնարկությունները նախապատվություն ստացան ինքնուրույնաբար լուծել արտադրության տեխնիկական զարգացման հարցերը, որոշել կապիտալ ներդրումների ուղղությունները, օբյեկտները, միջոցառումները և դրանց հերթականությունը: Ըստ որում, արտադրության զարգացման ֆոնդի միջոցներն օգտագործվում են այնպիսի միջոցառումների իրականացման համար, որոնք մեծ մասամբ էտ են գնվում 1—2 տարվա ընթացքում և զգալիորեն նպաստում արտադրության արդյունավետության արագ բարձրացմանը: Արտադրության զարգացման ֆոնդն ստեղծվում է ձեռնարկության շահույթի, հիմնական ֆոնդերի լրիվ վերականգնման համար նախատեսված ամորտիզացիոն հատկացումների մի մասի և շարքից դուրս եկած ու ալելորուզության (հիմնական ֆոնդերի) իրացումից ստացված գումարի հաշվին: Խաղի ալդ, 1973 թ. հաստատված հրահանգի² համաձայն, արտադրության զարգացման ֆոնդին կարող է ուղղվել տվյալ ձեռնարկության գիտատեխնիկական մշակումները (փաստաթղթեր) օգտագործող այլ ձեռնարկություններից ստացվող միջոցների և ատեստավորված, որակի բարձր եատեզորիայի արտադրանքի իրացումից ստացված լրացուցիչ շահույթի մի մասը:

Միավորումների և ձեռնարկությունների արտադրության զարգացման ֆոնդին ամորտիզացիայից մասհանվող գումարը որոշվում է, ելակետ ընդունելով հաստատված նորմատիվները և հիմնական ֆոնդերի լրիվ վերականգնման համար նախատեսված ամորտիզացիոն մասհանումների գումարը: Նկատի ունենալով, որ միևնույն ճյուղի մեջ մտնող տարբեր ձեռնարկություններում հիմնական ֆոնդերի կազմում մեքենաների ու սարքավորումների տեսակարար կշիռը և դրանց տեխնիկական վիճակը խիստ տարբեր է, միևնույնություններին թույլատրվում է մինչև 50%-ի սահմաններում շերտավորել հիմնական ֆոնդերի լրիվ վերականգնման համար նախատեսված ամորտիզացիոն հատկա-

² «Հրահանգ արդյունաբերական ձեռնարկությունների արտադրության զարգացման ֆոնդի միջոցների կազմավորման և օգտագործման կարգի մասին», Երևան, 1974:

ցումներից արտադրության զարգացման ֆոնդին կատարվող մասնաճանաչների նորմատիվները: Ըստ որում, այդ շերտավորումն իրականացվում է համապատասխան պլանային տարվա արտադրության զարգացման ֆոնդի գումարների սահմաններում:

Արտադրության զարգացման ֆոնդի երկրորդ կարևոր աղբյուրը շահույթն է: Տնտեսական ոնֆորմի առաջին տարիներին, արտադրության զարգացման ֆոնդի կազմավորման գործող կարգի համաձայն, շահույթից այդ ֆոնդին կատարվող հատկացումների մեծությունը որոշելու համար օգտագործվում էր ֆոնդակազմավորման երկու ցուցանիշ՝ իրացվող արտադրանքի (շահույթի) անը և շահութաբերության մակարդակը: Այդ ցուցանիշների աճի յուրաքանչյուր տոկոսի համար սահմանվում էր նորմատիվ, տոկոսնելուով՝ հիմնական ֆոնդերի միջին տարեկան արժեքի նկատմամբ: Արտադրության զարգացման ֆոնդի կազմավորման այդ եղանակը չէր նպաստում արտադրության ինտենսիվ զարգացմանը: Այն ձեռնարկություններին մղում էր ավելացնել հիմնական ֆոնդերը, բանի որ այդ դեպքում մեծանում էին նաև արտադրության զարգացման ֆոնդի միջոցները: Այն ձեռնարկությունները, որոնք արտադրության տեխնիկական զարգացման խիստ կարիք էին զգում, սակայն ունեին արտադրության աճի ոչ բարձր տեմպեր և համեմատաբար ոչ մեծ շահութաբերություն մակարդակ: ղծվարություններ էին կրում իրականացվող միջոցառումների ֆինանսավորման ժամանակ: Ահա թե ինչու դեռևս 9-րդ հնգամյակում փոփոխվեց արտադրության զարգացման ֆոնդի կազմավորման կարգը: Այժմ այդ ֆոնդին շահույթներից մասնաճանաչների գումարը որոշվում է հընդամյա պլանով՝ ելնելով հաստատված նորմատիվներից և հաշվեկշռային շահույթի պլանային գումարից: Ըստ որում, շահույթից արտադրության զարգացման ֆոնդին փաստացի հատկացումները կատարվում են՝ ելնելով պլանով նախատեսված ֆոնդի գումարից, այդ գումարը ավելացնելով (նվազեցնելով) շահույթի պլանի գերակատարման (թերակատարման) աստիճանին համապատասխան: Ինչպես հայտնի է, արտադրության զարգացման ֆոնդին կատարվող ամօրտիզացիոն հատկացումները կայուն քնույթ ունեն և կախված չեն ձեռնարկությունների ու միավորումների տնտեսական գործունեության վերջնական արդյունքներից: Մինչդեռ արտադրության զարգացման ֆոնդին շահույթից կատարվող հատկացումների մեծությունն անմիջականորեն կախված է ձեռնարկությունների և միավորումների տնտեսական գործունեության վերջնական արդյունքներից: շահույթի գումարի մեծացմանը զուգընթաց ավելանում են արտադրության զարգացման ֆոնդի չափերը, որի շնորհիվ բարձրանում է արտադրական կոլեկտիվների շահագրգռվածությունն արտադրության արդյունավետության բարձրացման գործում: Հետևաբար, արտադրության զարգացման ֆոնդը երկակի դեր է կատարում. մի կողմից, այն հանդես է գալիս որպես գործող ձեռնարկությունների և միավորումների արտադրության տեխնիկական զարգացումն ու կատարելագործումը ֆինանսավորելու աղբյուր, իսկ մյուս կողմից՝ որպես արտադրական կոլեկտիվներին տնտեսական խթանման կարևոր լծակ:

Ստորև բերված աղյուսակի տվյալները բնութագրում են այդ ֆոնդի կազմավորման աղբյուրների հարաբերակցությունը ՀՍՍՀ մի բանի արտադրական միավորումներում:

Արտադրության զարգացման ֆունդի կազմավորման աղբյուրների
կառուցվածքը ՀՍՍՀ մի քանի արտադրական միավորումներում³

Արտադրական միավորումներ	Ֆունդի ընդհանուր գումարը	Այդ թվում					
		Ամբողջական հատկացումներ			Շահույթից		
		գումարը	տոկոսը	միավորումներ	գումարը	տոկոսը	միավորումներ
«Հայկական արտադրություն»							
1976 թ.	1515	529	34,9	881	58,2	105	6,9
1978 թ.	2423	1002	41,4	1372	56,6	49	2,0
«Հայկական մեքենաներ»							
1976 թ.	1719	1042	60,6	675	39,3	2	0,1
1978 թ.	2501	1349	53,9	1116	44,6	36	1,5
«Հայրիմ մեքենաներ»							
1976 թ.	317	189	59,6	89	28,1	39	12,3
1978 թ.	361	264	73,1	90	24,9	7	2,0
«Հայկական արտադրություն»							
1976 թ.	543	97	17,9	339	62,4	107	19,7
1978 թ.	1225	530	43,3	671	54,8	24	1,9
«Անդրկովկասյան արտադրություն»							
1976 թ.	761	379	49,8	382	50,2	—	—
1978 թ.	2401	1319	54,9	1082	45,1	—	—
«Հասարակական աշխատանք»							
1976 թ.	508	172	33,9	297	58,5	39	7,6
1978 թ.	857	226	26,4	488	56,9	143	16,7
«Սևանի»							
1976 թ.	103	19	18,4	80	77,7	4	3,9
1978 թ.	240	28	11,7	181	76,6	28	11,7

Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ «Հայկական արտադրություն», «Անդրկովկասյան արտադրություն» արտադրական միավորումներում արտադրության զարգացման ֆունդի հատկացումների կեսից ավելին կազմում էն ամբողջական հատկացումները, Այդ աղբյուրի հաշվին ստացված միջոցները «Հայկական արտադրություն» միավորումում 1976 թ. կազմել են 1 մլն. 42 հազար ռ., իսկ 1978 թ.՝ 1 մլն 349 հազար ռ.։ Ամբողջական հատկացումների հաշվին արտադրության զարգացման ֆունդի կազմավորումը միավորումներին հնարավորություն է տալիս կայուն ուսուցանել ունենալ աշխատանքի մաշված միջոցների վերականգնման և տեխնիկական զարգացման համար նույնպիսի դեր են կատարում նաև շարքից դուրս եկած և ավելորդ զույլի իրացումից ստացված միջոցները, որոնք մտնում են արտադրության զարգացման ֆունդի մեջ։ Սակայն արտադրության զարգացման ֆունդի խթանիչ դերը դրոշմային է։

³ Տվյալները վերցված են նշված արտադրական միավորումների տարեկան հաշվետվություններից։

սերտորակում է հիմնականում շահույթի հաշվին այդ ֆոնդի կազմավորման և օգտագործման միջոցով, քանի որ շահույթի դումարն անմիջականորեն արտա-
ցւում է արտադրական կոլեկտիվների աշխատանքի արդյունավետությունը, Մինչդեռ, ինչպես ցույց են տալիս բերված աղյուսակի տվյալները, շահույթից կատարվող հատկացումների տևականարար կշիռը արտադրության զարգացման ֆոնդի կազմավորման աղբյուրների կառուցվածքում, ցավոք, անկման տևե-
ղենց ունի, որը կարող է թուլացնել ֆոնդի ֆունկցիաները արտադրության ար-
դյունավետության բարձրացումը խթանելու դործում:

Արտադրության տեխնիկական վերագինման և վերակառուցման դործում արտադրության զարգացման ֆոնդի դերը և նշանակությունը տարեցտարի մե-
ծանում է: Նրկրի արդյունաբերության մեջ այդ ֆոնդի տեսակարար կշիռը
ապակենտրոնացված կապիտալ ներդրումների ընդհանուր գումարում 1970 թ.
22,3%-ից 1976 թ. հասավ 29,4%-ի⁴: Արտադրության զարգացման ֆոնդին
հատկացված գումարը ՄԱՀՄ արդյունաբերության մեջ 1976 թ. հասավ 6,9
մլրդ. ոուբ., որը կապիտալ ներդրումների ծավալում կազմեց մոտ 13,5 տո-
կոս, կամ հիմնական արտադրական ֆոնդերի մոտ 2 տոկոսը⁵, 1977 թ. այդ
ֆոնդի օգտագործված մասը (առանց հաշվի առնելու մնացորդները) երերի
արդյունաբերության մեջ կազմեց 6122 մլն. ոուբ.⁶, իսկ մեր հանրապետու-
թյունում՝ 41,9 մլն. ոուբ. (մնացորդների հետ միասին)⁷:

Հնայած դրան, այն դեռևս ըստ ամենայնի չի կատարում իր դերը տեխ-
նիկական առաջադիմության արագացման գործում: Այդ ֆոնդի կազմավոր-
ման համակարգը անընդհատ փոփոխությունների է ենթարկվում, սակայն
դեռևս կարիք ունի հետագա կատարելագործման: Բանն այն է, որ մինչև այժմ
արտադրության զարգացման ֆոնդի մեծությունը գիտականորեն չի հիմնա-
վորվում: Դա բացատրվում է հիմնականում նրանով, որ ներկայումս մինչև
վերջ բացահայտված չեն արտադրության զարգացման ֆոնդի էությունը, տե-
տեսական նշանակությունը և ֆունկցիաները: Մինչդեռ հենց դրանցից է կախ-
ված արտադրության զարգացման ֆոնդի գիտականորեն հիմնավորված մե-
ծության որոշումը, իսկ վերջինիս հիման վրա՝ ամորտիզացիոն հատկացում-
ներից ու շահույթից կատարվող մասհանումների նորմատիվների ճիշտ սահ-
մանումը:

Արտադրության զարգացման ֆոնդի էությունը, ֆունկցիաների բացահայ-
տումը, հետևաբար նաև այդ ֆոնդի հիմնավորված մեծության որոշումը դժվա-
րանում է այն պատճառով, որ գործնականում գործող ձևերակություններում
ու միավորումներում կենտրոնացված և ապակենտրոնացված կապիտալ ներ-
դրումները մինչև այժմ հստակորեն չեն սահմանադատվում: Մինչդեռ, եթե
պետական կենտրոնացված կապիտալ ներդրումները նախատեսված են գոր-
ծող ձևերակությունների արտադրության արմատական վերակառուցման հա-
մար և այդ պատճառով կապված են մեծ տեսակարար կշիռ ունեցող շինմոն-
տաժային աշխատանքների հետ, ապա արտադրության զարգացման ֆոնդի
միջոցները նախատեսված են տեխնիկական առաջադիմության ապահովման,

⁴ «Совершенствование хозрасчетного механизма развития производства», под ред.
В. Г. Стародубовского и др., М., 1978, с. 137.

⁵ Նույն տեղում, էջ 141:

⁶ «Народное хозяйство СССР в 1977 г.», М., 1978, с. 556.

⁷ «Народное хозяйство Армянской ССР в 1977 г.», Ереван, 1978, с. 267.

և առաջին հերթին, սարքավորումների ձեռքբերման համար, Լեռնադրության զարգացման ֆոնդը, իհարկե, չի կարող փոխարինել պետական կենտրոնացված կապիտալ ներդրումներին, որոնք իրականացվում են գործող ձեռնարկությունների և միավորումների արտադրության տեխնիկական վերակառուցման ու վերազինման համար, կենտրոնացված կապիտալ ներդրումները բոլոր դեպքերում արտադրության զարգացման ու կատարելագործման հիմնական աղբյուրն են: Սակայն լրիվ տնտեսաշարժի արմատավորման համար այժմ առաջին պլան է մղվում ձեռնարկությունների ինքնաֆինանսավորումը, որի նպատակն է ստեղծել այնպիսի տնտեսական պայմաններ, որոնք ձեռնարկություններին և միավորումներին տնտեսապես խթանեն բարելավելու առկա ուսուրսների օգտագործումը և ապահովելու կապիտալ ներդրումների արդյունավետությունը: Չնայած դրան, մինչև այժմ գործող ձեռնարկություններում բացակայում է հիմնական ֆոնդերի վերարտադրության պրոցեսի կոմպլեքսային պլանավորումը և ֆինանսավորումը: Մեր հետևանքով ձեռնարկություններում այժմ չեն կազմվում հիմնական ֆոնդերի վերարտադրության կոմպլեքսային պլաններ, այսինքն այնպիսի պլաններ, որոնք ընդգրկեն հիմնական ֆոնդերի վերարտադրության բոլոր կողմերը՝ ընդլայնումը, վերակառուցումը, փոխարինումը, արդիականացումը և կապիտալ նորոգումը: Ինչո՞ւ հիմնական ֆոնդերի վերարտադրության նշված կողմերից յուրաքանչյուրի պլանավորումն իրականացվում է առանձին, իսկ դրանց ֆինանսավորման աղբյուրները հետևողորեն չեն սահմանադատվում: Բավական է նշել, որ այժմ գոյություն ունի կենտրոնացված և ապակենտրոնացված կապիտալ ներդրումների ավելի քան 30 աղբյուր, որոնցից մի քանիսը կրկնվում են կենտրոնացված և ապակենտրոնացված կապիտալ ներդրումների պլաններում: Նշված թերությունների հետևանքով հաճախ գործնականում կենտրոնացված կապիտալ ներդրումներն օգտագործվում են տեխնիկական առաջադիմության ֆինանսավորման համար և, ընդհակառակը, արտադրության զարգացման ֆոնդի միջոցներն օգտագործվում են կենտրոնացված կապիտալ ներդրումների փոխարեն:

Ժամանակակից պայմաններում, երբ առաջին պլան են մղվում արտադրության զարգացման ինտենսիվ մեթոդները, օբյեկտիվորեն անհրաժեշտ է որոշակիորեն սահմանադատել վերադաս տնտեսական մարմինների և միավորումների ու ձեռնարկությունների իրավունքներն ու պարտականությունները հիմնական ֆոնդերի վերարտադրության գործում: Ընդհանրապես է ճշտորեն որոշել կենտրոնացված կապիտալ ներդրումների և արտադրության զարգացման ֆոնդի ֆունկցիաները:

Տնտեսագիտական գրականության մեջ արտադրության զարգացման ֆոնդի էության, դերի և ֆունկցիաների վերաբերյալ գոյություն ունեն տարբեր, հաճախ իրարամերձ տեսակետներ: Իյսպես, որոշ տնտեսագետների կարծիքով արտադրության զարգացման ֆոնդը ստեղծվում է պարզ վերարտադրության⁸, իսկ տնտեսագետների մի այլ խմբի կարծիքով՝ ընդլայնված վերարտադրության իրականացման նպատակով⁹: Լեռնադրության զարգացման ֆոնդի էությունը և ֆունկցիաները բացահայտելու համար նպատակահարմար է

⁸ «Финансы и эффективность производственных фондов», М., 1973, с. 115

⁹ «Основы и практика хозяйственной реформы», под ред. Н. Е. Дрогичинского и др., М., 1971, с. 328; Н. М. Озобниц, А. И. Рогов, А. И. Клиникий, Планирование промышленного производства в новых условиях, М., 1970, с. 304

պարզել այդ ֆունդի կազմավորման աղբյուրների տնտեսական բնույթը: Քանի որ այդ ֆունդի կազմավորման գլխավոր աղբյուր էն ծառայում էինական ֆունդերի լրիվ վերականգնման համար նախատեսված ամորտիզացիոն հատկացումների մի մասը և շահույթը, ուստի այստեղ կանգնողառնանք միայն այդ երկու աղբյուրներին:

Ինչպես հայտնի է, շահույթն իր տնտեսական բովանդակությամբ նաեւ է դալիս որպես ընդլայնված վերարտադրության աղբյուր: Հետեաբար, արտադրության զարգացման ֆունդի այն մասը, որը գոյանում է շահույթի հաշվին, պետք է օգտագործվի հիմնական ֆունդերի ընդլայնված վերարտադրության նպատակով: Ինչ վերաբերում է արտադրության զարգացման ֆունդի երկրորդ հիմնական աղբյուրին՝ ամորտիզացիոն հատկացումներին, ապա՝ դրանք բոլորից առաջ ծառայում են հիմնական ֆունդերի լրիվ վերականգնման, այսինքն՝ դրանց պարզ վերարտադրության համար: Սակայն ձեռնարկությունների պրակտիկայում հաճախ հնարավորություններ են ստեղծվում հիմնական ֆունդերի վտխանցված արժեքի մի մասն ընդլայնված վերարտադրության նպատակով օգտագործելու համար: Հետազոտելով ամորտիզացիոն ֆունդի ղեկը, Կ. Մարքսը գրել է, որ ամորտիզացիոն ֆունդը կուտակման ֆունդ է, որը կարող է օգտագործվել նոր հիմնական կապիտալի ներդրման, բարելավման և ընդլայնման համար¹⁰: Բացի այդ, անհրաժեշտ է նկատի ունենալ նաեւ հետևյալ հանդամանքները. առաջին, գիտատեխնիկական հեղափոխության նպայմաններում հիմնական ֆունդերի լրիվ վերականգնման համար նախատեսված ամորտիզացիոն հատկացումները, ապահովելով հիմնական ֆունդերի պարզ վերարտադրությունը, հնարավորություն են տալիս ֆիզիկապես մաշված ալիսատանքի միջոցները փոխարինել ավելի բարձր արտադրողականություն ունեցող մեքենաներով ու սարքավորումներով. երկրորդ, աշխատանքի արտադրողականության բարձրացման շնորհիվ իջնում է հիմնական ֆունդերի իրային տարրերի արժեքը, որը հնարավորություն է տալիս մինևույն ծախսումներով ավելացնել մեքենաների ու սարքավորումների քանակը: Այդ կապակցությամբ Կ. Մարքսը գրել է, որ աշխատամիջոցները մեծ մասամբ միշտ հեղաշրջվում են արդյունաբերության առաջադիմության շնորհիվ: Ուստի նրանք փոխարինվում են իրենց ոչ թե սկզբնական ձևով, այլ հեղաշրջված ձևով¹¹: Այսպիսով, տեսականորեն անվիճելի է, որ արտադրության զարգացման ֆունդը ոչ միայն հնարավոր է, այլև օբյեկտիվորեն անհրաժեշտ է օգտագործել ինչպես հիմնական ֆունդերի պարզ, այնպես էլ ընդլայնված վերարտադրության խաղկունացման համար: Այդ դեպքում, բնականաբար, արտադրության զարգացման ֆունդի պլանավորման և նորմատիվների որոշման ժամանակ անհրաժեշտ է ելակետ ընդունել գործող միավորումների և ձեռնարկությունների ընդլայնված վերարտադրության իրականացման համար անհրաժեշտ կապիտալ ներդրումները: Մինչդեռ, այժմ գործող կարգի համաձայն, սկսած 1973 թ. արտադրության զարգացման ֆունդին շահույթից կատարվող մասհանումներին նորմատիվը որոշվում է՝ հնգամյակի բազիսային տարում տվյալ ձեռնարկության կամ միավորման արտադրության զարգացման ֆունդին փաստացի հատկացված շահույթը հարաբերելով տվյալ տարվա հաշվեկշռային շահույթի ընդհանուր գումարի վրա: Նույն ձևով են սահմանվում նաև ամորտիզացիայից՝

¹⁰ К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 26, ч. II, с. 534.

¹¹ Կ. Մարքս, Կապիտալ, հ. 2, Երևան, 1936, էջ 139:

արտադրության զարգացման ֆոնդին կատարվող հատկացումների նորմատիվները, այսինքն՝ հնգամյակի բաղիսային տարում արտադրության զարգացման ֆոնդին ուղղված ամորտիզացիոն հատկացումների դրամար հարաբերվում է տվյալ տարվա հիմնական ֆոնդերի լրիվ վերականգնման համար նախատեսված ամորտիզացիոն հատկացումների ամբողջ գումարի վրա: Հետևաբար, հնգամյակի համար կայուն նորմատիվներ որոշելիս ելակետ են ծառայում շահույթից ու ամորտիզացիայից արտադրության զարգացման ֆոնդին բաղիսային տարում կատարված մասհանումների արդեն կազմավորված գումարները, որոնք, բնականաբար, չեն արտացոլում արտադրության տեխնիկական զարգացման համար անհրաժեշտ միջոցների նկատմամբ պայանային ժամանակաշրջանում ձեռնարկությունների ու միավորումների իրական պահանջները: Այդ պատճառով էլ որոշ տնտեսագետներ առաջարկում են զգալիորեն ավելացնել արտադրության զարգացման ֆոնդի չափերը և այժմյան 2%-ի փոխարեն հասցնել 7—10%-ի¹², նման տեսակետի հետ չի կարելի համաձայնվել, քանի որ այդ դեպքում էականորեն կկրճատվի կենտրոնացված կապիտալ ներդրումների բաժինը, կխախտվի պետական միասնական քաղաքականությունն այդ բնագավառում՝ դրանից բխող մնացած բոլոր բացասական հետևանքներով հանդերձ: Հասկանալի է, որ արտադրության տեխնիկական զարգացման հարցում անհրաժեշտ է ելակետ ընդունել ոչ թե առանձին ձեռնարկությունների, այլ ամբողջ ժողովրդական տնտեսության ընդհանուր շահերը: Այդ բնագավառում ձեռնարկությունների լրիվ ինքնուրույնությունը կարող է փոշիացնել կապիտալ ներդրումները, խանգարել կարևորագույն պետական կառույցների նորմալ ֆինանսավորմանը:

Արտադրության զարգացման ֆոնդի մեծությունը ճիշտ որոշելու համար անհրաժեշտ է մի կողմից, կապիտալ ներդրումները դասակարգել ըստ դրանց նշանակության, ծախսերի ու աշխատանքների կառուցվածքի, մյուս կողմից՝ երևան հանել արդյունաբերության կառավարման տարբեր օղակների ֆունկցիաները հիմնական ֆոնդերի վերարտադրության բնագավառում:

Մինչև վերջերս հիմնական ֆոնդերի ընդլայնված վերարտադրության տարբեր ձևերը՝ նոր շինարարությունը, ընդլայնումը, վերակառուցումը և տեխնիկական վերազինումը միմյանցից հատկորեն չէին սահմանազատվում: Հաճախ խառնաշփոթություն էր առաջանում դրանց անվանումներում, շփոթվում էր դրանց էությունը, մեկը փոխարինվում էր մյուսով: Երա հետևանքով խիստ դժվարանում էր կապիտալ ներդրումների պլանավորումը, ֆինանսավորումը և հաշվառումը, ինչպես նաև դրանց տեխնիկատնտեսական հիմնավորումն ու նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակումը: Հաշվի առնելով այդ խնդրի կարևորությունը, ՍՍՀՄ պետպլանի և ՍՍՀՄ պետշինի համատեղ որոշմամբ¹³ 1975 թ. ճշգրտվեց հիմնական ֆոնդերի ընդլայնված վերարտադրության յուրաքանչյուր կողմի հասկացողությունը: Նախկինում հաճախ ձեռնարկության ընդլայնումը նույնացվում էր նրա վերակառուցման կամ տեխնիկական վերազինման հետ: Մինչդեռ, եթե ձեռնարկությունների ընդլայնման ժամանակ շինմոնոթային աշխատանքների տեսակարար կշիռը կազմում է

¹² «Коммунист», 1972, № 1, с. 45; «Совершенствование механизма хозяйствования в условиях развитого социализма», под ред. Н. Е. Дрогичинского, М., 1975, с. 178.

¹³ «Экономическая газета», 1975, № 15, с. 9.

մոտ 60—70%, ապա վերականգնումն կամ տեխնիկական վերադիման ղեկավարում՝ 20—25%¹⁴, ՍՍՀՄ պետականի և պետշինի մեթոդական ցուցումների համաձայն ձեռնարկության վերականգնումն իրականացվում է միասնական կոմպլեքսային նախագծերի հիման վրա: Ձեռնարկության վերականգնումն ինդիքն է իրականացնել արտադրության լրիվ կամ մասնակի վերասարքավորում: Անհրաժեշտության դեպքում կարող են կառուցվել նորերը կամ բնդլայն-վել դոյություն ունեցող օժանդակ ու նախապատրաստական օբյեկտները: Ըստ որում, հիմնական արտադրությանը պատկանող արտադրամասերի կառուցումը կամ բնդլայնումը դուրս է դալիս վերականգնման շրջանակներից: Սակայն վերականգնմանն է վերաբերվում նոր արտադրամասերի և օբյեկտների շինարարությունը, եթե այն կատարվում է լուծարքի ենթարկված արտադրամասերի փոխարեն, որոնց հետագա շահագործումը այլևս նպատակահարմար չէ:

Ձեռնարկությունների վերականգնումը տարբերվում է նաև տեխնիկական վերադիմումից, եթե ձեռնարկության վերականգնման ժամանակ աշխատանքներն իրականացվում են միասնական կոմպլեքսային նախագծերի հիման վրա, ապա տեխնիկական վերադիման ղեկավարում՝ միավորման (ձեռնարկության) տեխնիկական զարգացման պլանին համապատասխան՝ ըստ առանձին օբյեկտների կամ աշխատանքի տեսակների նախագծերի, կամ նախահաշիվների (առանց դոյություն ունեցող արտադրական հրապարակների ընդլայնման): Նշված մեթոդական դրույթների համաձայն, ձեռնարկության վերականգնման և վերադիման աշխատանքները նպատակահարմար է ֆինանսավորել զխավորապես արտադրության զարգացման ֆոնդի հաշվին: Անհրաժեշտության դեպքում միավորումները (ձեռնարկությունները) կարող են օգտվել բանկային վարկերից: Ավելին, ՍՍՀՄ պետականի մասնագետների կարծիքով ձեռնարկությունների տեխնիկական վերականգնման և վերադիման ֆինանսավորման աղբյուրը պետք է լինի միայն արտադրության զարգացման ֆոնդը, իսկ գործող ձեռնարկությունների ընդլայնման և նորերի կառուցման համար՝ կենտրոնացված կապիտալ ներդրումները, այսինքն՝ ամորտիզացիան, շահույթը, ձեռնարկության սնփական միջոցների մյուս աղբյուրները և բանկի վարկերը¹⁵: Մեր կարծիքով, այս տեսակետը ճիշտ է, և նրա իրականացումը կնպաստի ինչպես կապիտալ ներդրումների օգտագործման արդյունավետության, այնպես էլ արտադրության զարգացման ֆոնդի ղերի էական բարձրացմանը:

Այսպիսով, այժմ զգալի պարզություն է մտցվում ինչպես հիմնական ֆոնդերի ընդլայնված վերարտադրության տարբեր ձևերի էությունը, այնպես էլ արտադրության զարգացման ֆոնդի հիմնական ֆունկցիոնալ ղերը որոշելու բնագավառում:

Արդյունաբերության կառավարման կազմակերպական կառուցվածքի բարելավումը, այսինքն տարբեր տիպի միավորումների ստեղծումը թույլ է տալիս ենթադրել, որ ձեռնարկությունների արմատական վերականգնման կապիտալ ներդրումները համապատասխանում են համամիութենական (հանրապետական) արդյունաբերական միավորումների ֆունկցիաներին, իսկ այսպես կոչված «փոքր» և «միջին» վերականգնումն ու տեխնիկական վերադիմումը՝ ար-

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ В. Г р и б о в, Совершенствование планирования и финансирования капитальных вложений («Плановое хозяйство», 1976, № 7, с. 90—91).

տաղրական միավորումների ֆունկցիաներին: Այդ ֆունկցիաների սահմանումը հնարավորություն է տալիս որոշել արտադրության զարգացման ֆունկցիոնալ փերը արդյունաբերության կառավարման տարբեր օղակների՝ արդյունաբերական և արտադրական միավորումների համար:

Արտադրության զարգացման ֆունկցիոնալ կազմավորումը և օգտագործումը նպատակահարմար է իրականացնել հետևյալ ձևով. ձևոնարկություններն ու արտադրական միավորումները արտադրության տեխնիկական վերադիման հնգամյա պլանների հիման վրա պետք է որոշեն այդ նպատակով անհրաժեշտ ծախսերը և ներկայացնեն համապատասխան արդյունաբերական միավորմանը (մինիստրությանը) հաստատման համար: Վերջիններս պետք է բննարկեն և ամփոփեն իրենց կազմում ընդգրկված ալտադրական միավորումների (ձևոնարկությունների) տեխնիկական վերադիման պլանային ծախսերը և տեխնիկական վերակառուցման ծախսերի հետ դրանք միասին ներկայացնեն համապատասխան մինիստրությանը: Իր հերթին, յուրաքանչյուր մինիստրություն այդ ծախսերը բննարկելուց և հաստատելուց հետո արտադրության տեխնիկական վերակառուցման և վերադիման պլանային առաջադրանքներն ու արտադրության զարգացման ֆունկցիոնալ կազմավորումները պետք է խեցնի ստորադաս օղակներին: Ըստ որում, նշված գումարները պետք է հաշվի առնել պետական կապիտալ ներդրումների ժողովրդատնտեսական պլանում՝ ապահովելով նյութատեխնիկական ռեսուրսներով և շինարարական կազմակերպությունների կարողություններով: Արտադրության զարգացման ֆունկցիոնալ կազմավորման առաջարկվող եղանակի կիրառման ժամանակ շահույթից և ամորտիզացիայից այդ ֆունկցիոնալ կառավարող հատկացումների նորմատիվների հաշվարկման համար պետք է ելակետ ծառայեն հնգամյա պլանում նախատեսված արտադրության զարգացման ֆունկցիոնալ հաշվառկային գումարները: Միաժամանակ, անհրաժեշտ է ըստ ամենայնի ուժեղացնել արտադրության զարգացման ֆունկցիոնալ կազմավորման տնտեսաշարժարկային մեխանիզմը, այսինքն՝ ֆունկցիոնալ կազմավորման հատկացումներն անմիջականորեն կապակցել արտադրական կոնկրետների գործունեության արդյունավետությունը բնութագրող ցուցանիշների կատարման և գերակատարման հետ: Այդ կապակցությամբ ՍՄԿԿ XXV համագումարում Ա. Ն. Կոսիգինն ընդգծեց, որ յուրաքանչյուր ձևոնարկությունում և միավորումում տնտեսական խթանման ֆունկցիոնալ փերը պետք է «ուղղակի կախման մեջ դրվեն արտադրության ինտենսիվության, աշխատանքի արտադրողականության բարձրացման, տեխնիկական առաջադիմության գործում ձևոնարկված արդյունքներից»¹⁶:

Արտադրության զարգացման ֆունկցիոնալ կազմավորման առաջարկվող եղանակը արդյունաբերական և արտադրական միավորումներին հնարավորություն կտա իրականացնել միասնական տեխնիկական քաղաքականություն, ապահովել ձևոնարկությունների կոմպլեքսային վարկացումը, վերացնել գործող արտադրության զարգացման ֆինանսական աղբյուրների բազմազանությունը, հստակորեն սահմանադատել արդյունաբերության կառավարման տարբեր օղակների ֆունկցիաները արտադրության տեխնիկական զարգացման բնագավառում և հետևաբար, բարձրացնել յուրաքանչյուր օղակի պատասխանատվությունը կատարվող միջոցառումների համար: Այդ եղանակը հնարավորու-

16. ՍՄԿԿ XXV համագումարի նյութերը, էջ 196.

թիւն կտա նաև մոբիլիզացնել գոյութիւն ունեցող ռեսուրսները և օպերատիվ կերպով լուծել արտադրութեան տեխնիկական զարգացման ու վերադիման բնորոշումը: Հաշվի առնելով կոնկրետ տնտեսական իրավիճակն ու փոփոխութիւնները: Վերջապէս, ալն հնարավորութիւն կտա ուժեղացնել արտադրութեան զարգացման ֆոնդի ստեղծման տնտեսական անհրաժեշտութիւնը՝ ֆոնդի մեծութիւնը ուղղակի կախման մէջ դնել միավորումների տնտեսական զորութեան վերջնական արդյունքներին:

Տնտեսական շաղկարկի սկզբունքների հետևողական կիրառումը սլա անհրաժեշտ է արտադրութեան զարգացման ֆոնդի կազմավորման համակարգի հետապա կատարելագործում ալն իմաստով: որ րնդլայնվեն արտադրական միավորումների և ձեռնարկութիւնների տնտեսական իրավունքները արտադրութեան տեխնիկական զարգացման բնագավառում, հստակորեն սահմանադրվեն պետական կենտրոնացված եապիտալ ներդրումների և արտադրութեան զարգացման ֆոնդի միջոցների օգտագործման շրջանակները և վերջինիս մեծութիւնը ուղղակի կախման մէջ դրվի արտադրական կուկտիվների զորութեան վերջնական արդյունքներին:

СОВЕРШЕНСТВОВАНИЕ СИСТЕМЫ ОБРАЗОВАНИЯ ФОНДА РАЗВИТИЯ ПРОИЗВОДСТВА

МИША ВАСИЛЯН

Резюме

Теоретической основой определения сущности и функционального назначения ФРП является раскрытие экономической природы источников этого фонда. Амортизационные отчисления на реновацию, как и прибыль, по своему экономическому содержанию выступают в качестве источников расширенного воспроизводства основных фондов. Исходя из этого, средства ФРП объективно необходимо использовать не только для простого, но и для расширенного воспроизводства основных фондов. При этом коренную реконструкцию производства целесообразно возложить на промышленные объединения, а частичную реконструкцию и техническое перевооружение—на производственные объединения.

Размеры указанного фонда должны быть тесно связаны с объективными потребностями воспроизводства основных фондов в соответствии с пятилетним планом технического развития и перевооружения объединений и предприятий. Исходя из этого, целесообразно нормативы отчислений в ФРП от прибыли и от амортизации на реновацию основных фондов исчислять на основе предусмотренных в пятилетнем плане средств этого фонда.